Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
դեկտեմբերի 29-ի N 1905 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____
(ստուգում իրականացնող պետական մարմնի լրիվ անվանումը՝ ներառյալ ստորաբաժանման անվանումը)

ԿՈՂՄԻՑ 20 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության _____
(ստուգում իրականացնող պետական մարմնի լրիվ անվանումը՝ ներառյալ ստորաբաժանման անվանումը կամ ստորաբաժանումների անվանումները, եթե ստուգումը կատարվել է համատեղ)

կողմից 20 թվականի ընթացքում իրականացվել են _____ ստուգումներ, _____ վերստուգումներ և _____ ուսումնասիրություններ:
(քանակը) (քանակը) (քանակը)

NN ը/կ	Տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը կամ անունը, ազգանունը (անհատ ձեռնարկատիրոջ դեպքում)		Պետական գրանցման համարը	Հարկ վճարողի հաշվառման համարը (առկայության դեպքում)	Ստուգում, վերստուգում կամ ուսումնասիրություն					Իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել	Նշում՝ բողոքարկ-ման/գան-գատարկման վերաբերյալ (Բ՝ եթե բողոքարկվել է, Գ՝ եթե գանգա-տարկվել է)
	անվանումը կամ անունը, ազգանունը	կազմա-կերպա-իրավական ձևը			տե-սակը	քա-նակը	սկիզբը (օրը, ամիսը, տարե-թիվը)	ավարտը (օրը, ամիսը, տարե-թիվը)	անց-կացման հիմքը		

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ԴԻ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
դեկտեմբերի 29-ի N 1905 - Ն որոշման

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԻ ԼՐԱՑՄԱՆ

1. Մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 20-ը ստուգում իրականացնող մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում պարտադիր տեղադրվում է վերջինիս կողմից նախորդ տարվա ընթացքում անցկացված ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ Microsoft Office Excel ձևաչափով լրացված հաշվետվությունը (այսուհետ՝ հաշվետվություն):

2. Հաշվետվությունում նշվում են տեղեկություններ ստուգված կամ ուսումնասիրված տնտեսավարող սուբյեկտների, ինչպես նաև անցկացված ստուգումների և ուսումնասի-րությունների վերաբերյալ:

3. Հաշվետվությունը լրացվում է հետևյալ կարգով՝

1) 1-ին սյունակում գրանցվում է հերթական համարը.

2) 2-րդ սյունակում գրանցվում է տնտեսավարող սուբյեկտի անվանումը.

3) 3-րդ սյունակում՝ տնտեսավարող սուբյեկտի կազմակերպաիրավական ձևը.

4) 4-րդ սյունակում գրանցվում է տնտեսավարող սուբյեկտի պետական գրանցման համարը (պետական ռեգիստրում տվյալ տնտեսավարող սուբյեկտի հաշվառման համարը).

5) 5-րդ սյունակում գրանցվում է տվյալ տնտեսավարող սուբյեկտի հարկ վճարողի հաշվառման համարը, եթե տվյալ ստուգում իրականացնող մարմինը տիրապետում է այդ տեղեկատվությանը: Տեղեկատվության բացակայության դեպքում դաշտը մնում է դատարկ.

6) 4-րդ և 5-րդ սյունակները լրացնելիս՝ յուրաքանչյուր նիշ գրանցվում է առանձին սյունակում.

7) 6-րդ սյունակում նշվում է անցկացված միջոցառման տեսակը՝ ստուգում, վերստուգում կամ ուսումնասիրություն.

8) 7-րդ սյունակում նշվում է նույն տնտեսավարողի մոտ անցկացված ստուգումների կամ ուսումնասիրությունների քանակը, սակայն 8-12 սյունակները լրացվում են յուրաքանչյուր միջոցառման համար առանձին.

9) 8-րդ դաշտում գրանցվում է ստուգման կամ ուսումնասիրության սկիզբը՝ օրը, ամիսը և տարեթիվը.

10) 9-րդ դաշտում գրանցվում է ստուգման կամ ուսումնասիրության ավարտը՝ օրը, ամիսը և տարեթիվը.

11) 10-րդ դաշտում գրանցվում է անցկացված ստուգման կամ ուսումնասիրության հիմքը՝ համաձայն հետևյալ կոդավորման.

Ստուգման կամ ուսումնասիրության հիմքը	**Կոդը**
Պլանով նախատեսված ստուգում	1
«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասով նախատեսված ստուգումներ	
1-ին ենթակետով նախատեսված	21
2-րդ ենթակետով նախատեսված	
ՀՀ վարչապետի հանձնարարական	221
Քաղաքացու դիմում	222
Իրավաբանական անձի դիմում	223
Անհատ ձեռնարկատիրոջ դիմում	224
Պետական մարմնից գրավոր տեղեկատվություն	225
Տեղական ինքնակառավարման մարմնից գրավոր տեղեկատվություն	226
3-րդ ենթակետով նախատեսված	23
4-րդ ենթակետով նախատեսված	24
5-րդ ենթակետով նախատեսված	
Ակցիզային դրոշմանիշների ստուգում	251
Հսկիչ նշանների (դրոշմապիտակների) ստուգում	252
Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ստուգում	253
Ելակետային տվյալների և դրանց ուղղիչ գործակիցների ստուգում	254
Չձևակերպված աշխատողների բացահայտմանն ուղղված ստուգում	255
6-րդ ենթակետով նախատեսված	26

7-րդ ենթակետով նախատեսված	27
8-րդ ենթակետով նախատեսված	28
9-րդ ենթակետով նախատեսված	29
«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված վերստուգումներ	
«ա» ենթակետով նախատեսված	31
«բ» ենթակետով նախատեսված	32
«գ» ենթակետով նախատեսված	33
«դ» ենթակետով նախատեսված	34
«ե» ենթակետով նախատեսված	35
«զ» ենթակետով նախատեսված	36
«ը» ենթակետով նախատեսված	37
«թ» ենթակետով նախատեսված	38
«ժ» ենթակետով նախատեսված	39
Ուսումնասիրություն	4

.

12) 11-րդ դաշտում նշվում են ստուգաթերթի համարը և այն հարցերի համարները, որոնք ստուգման ընթացքում նշվել են որպես անհամապատասխանություն: Այն մարմինները, որոնք ստուգումներն իրականացնում են առանց ստուգաթերթերի, կոդավորում են իրենց պահանջներն ու նորմերը յուրաքանչյուր իրավական ակտին տալով հերթական համար, իսկ հաջորդիվ նշելով արդեն այդ ակտի հոդվածի, մասի, կետի և ենթակետի համարները: Վերջիններից որևիցե մեկի բացակայության դեպքում նիշը լինում է 0-ն.

13) 12-րդ դաշտում նշվում է «Բ» տառը, եթե ստուգումը կամ ուսումնասիրությունը բողոքարկվել է կամ «Գ» տառը, եթե ստուգումը կամ ուսումնասիրությունը գանգատարկվել է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ